ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ՊԱՐՍՅԱՆԻ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍԻԳԱՐԵՏԻ ԵՎ ՍԻԳԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02-«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ» ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության ներկայացված թեման, որը վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրներին արդիական է համարվում երկրի տնտեսության մեջ իր ատադրության գրաված ծավալներով, արտաքին ապրանքաշջանառության, վերջինիս բարելավման առումով: Նախ նշենք, որ 2020 թվականի տվյալներով ծխախոտային արտադրության համախառն արտադրանքը ամբողջ արդյունաբերության 7.6 %-է և կազմում է 157.8 մլրդ դրամ: Եթե դիտարկում են մշակող արդյունաբերության մեջ, ապա ծխախոտային արտադրանքը առավել պատկառելի տեղ ունի և կազմում է 11.0 %: Ծխախոտային արտադրանքի արտահանման ծավալը կազմում է շուրջ 294.5 մլն ԱՄՆ դոլար, որը ընդհանուր արտահանման ծավալի 11.1 % է:

Ներկայացված տվյալները վկայում են, որ սիգարետի և սիգարի արտադրությունը ունի սոցիալ տնտեսական կարևոր նշանակություն, մասնավորապես հանրապետության բնակչության զբաղվածության ապահովման, արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, արտահանման ընդլայնման համար և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սիգարետի և սիգարի ոլորտի ձեռնարկատիրության զարգացման բնագավառում գիտական ուսումնասիրություններ չեն տարվել, ուստի ուսումնասիրված թեման կարելի է համարել հրատապ և որոշակիորեն բխում է հանրապետության ագրոպարենային ոլորտի զարգացման շահերից: Դիտարկված թեման կարևոր է համարվում նաև գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի, մասնավորապես ծխախոտային հումքի արտադրության ռացիոնալացման տեսանկյունից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է՝ մասնագիտական գրականության, միջազգային առաջավոր փորձի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների և սեփական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին առնչվող ձեռնարկատիրական գործունեության հիմնախնդիրները, առաջարկել դրանց լուծման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները:

Նշված նպատակին համապատասխան՝ աշխատանքի հիմքում դրվել են և լուծվել են մի շարք խնդիրներ, որոնց շրջանակն հետևյալն է.

- ուսումնասիրել ձեռնարկատիրական մտքի զարգացման էվոլյուցիան, սկզբունքները, գործառույթներն ու շարժառիթները, ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը,
- վերլուծել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը և հստակեցնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրելու հեռանկարները,
- հիմնավորել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին տեղական հումքով ապահովման կարևորությունն ու տնտեսական նշանակությունը,
- ներկայացնել ՀՀ համախառն արտադրանքի և արտահանման մեջ սիգարետի և սիգարի տեսակարար կշիռը, ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրությունը որպես տնտեսության կարևոր ճյուղ դիտարկելու տնտեսական անհրաժեշտությունը,
- հիմնավորել ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և տուրքերի կառուցվածքում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների առաջավոր և կարևոր դիրքերը,
- իրականացնել ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայի վերլուծություն 2010-2019թթ. համար, հաշվարկել շուկայի տարողությունը, ինքնաբավության աստիճանը, կատարել ներմուծման և արտահանման ծավալների միտումների և տրենդների ուսումնասիրություն,

- ներկայացնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման ուղիները, ձեռնարկատիրական ռիսկերը և ներդրումային միջավայրի բարելավման ուղիները:

Ատենախոսության հիմնական կառուցվածքային մասերը բխում են առաջադրված խնդիրներից, դրանք հանդիսանում են միմյանց լրացնող հաջորդականություն կազմող բաղադրիչներ: Աշխատանքը գլխավորապես բաղկացած է երեք գլուխներից, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են:

<u>Ատենախոսության առաջին՝ «Ձեռնարկատիրության զարգացման տեսական և մեթոդական հիմքերը» գլխում</u> ներկայացված են ձեռնարկատիրության տեսությունն ու մտքի զարգացման պատմությունը՝ նախորդներից մինչ ժամանակակից տեսությունները, ձեռնարկատիրության սկզբունքները, գործառույթներն ու շարժառիթները, ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը և սիգարետ ու սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության միջազգային փորձը:

Ըստ հեղինակի, ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեության բոլոր գործառույթները գտնվում են փոխկապակցության մեջ, սակայն դրանց արդյունավետ գործելու հիմնական նախապայմաններից են պետական աջակցության և իրավական դաշտի ապահովումը, ձեռնարկատիրության կարգավորման մեխանիզմների առկայությունը և այլն:

Աշխատանքի տվյալ գլխում հեղինակը անդրադարձ է արել ձեռնարկատիրության արդյունավետության գնահատման սկզբունքների և մեթոդների մշակման հարցերին: Առաջնություն է տրվում ցուցանիշների համակարգի կիրառմանը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է նաև ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Ձեռնարկատիրության զարգացման առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» գլխում</u> ներկայացված են սիգարետի և սիգարի արտադրության առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը ՀՀ-ում, սիգարետ և սիգար

արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության վերլուծությունը, սիգարետի և սիգարի ներքին ու արտաքին շուկաների առանձնահատկություններն ու վերլուծությունը:

Աշխատանքում ըստ սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների վերլուծվել է արտադրատնտեսական ցուցնիշները, մասնավորապես համախառն արտադրանքը, արտադրանքի իրացման ծավալը, աշխատողների թիվը, արտադրողականությունը, արտադրանքի ինքնարժեքը, շահութաբերության ցուցանիշները և այլն:

Ըստ հեղինակի ուսումնասիրությունների ՀՀ բյուջե հավաքագրված հարկային եկաուտների և տուրքերի ընդհանուր տեսակարար կշռում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները մեծ մասնաբաժին ունեն: 2016-2019թթ. ՀՀ-ում բոլոր սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները աշխատել են շահութաբեր:

ՈՒսումնասիրություններ են իրականացվել ծխախոտի հումքի արտադրության միտումների և առանձնհատկությունների վերաբերյալ:

Տվյալ գլխի շրջանակներում հեղինակի կողմից իրականացվել է 2016-2019թթ. սիգարետ և սիգար արտադրող հիմնական կազմակերպությունների համախառն արտադրանքի գործոնային վերլուծությունն ըստ հիմնական միջոցների և ֆոնդահատույցի, ըստ շրջանառու միջոցների և շրջանառելիության գործակցի:

Հեղինակը գտնում է, որ չնայած սիգարետն ու սիգարը չեն հանդիսանում պարենային ապրանք, դրանց տեսակարար կշիռը չի կարելի անտեսել բնակչության ծախսերի կառուցվածքում:

Ատենախոսի հաշվարկները ցույց են տվել, որ ՀՀ-ում 2019թ. 2010թ. համեմատ սիգարետի շուկայի տարողությունը ավելացել է 50.5 %-ով:

<u>Ատենախոսության երրորդ՝ «Ձեռնարկատիրական գործունեության հիմնահարցերը ու դրանց լուծման հիմնական ուղղությունները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» գլխում</u> ներկայացված են ոլորտի պետական կարգավորման ուղիները, ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման գործիքները և ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները:

Աշխատանքում ուշադրության են արժանանում պետական կարգավորում և պետական կառավարում հասկացությունները: Հեղինակը գտնում է, որ ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը կապված է հարկային, վարկային, ֆինանսավորման, մաքսային համակարգերի արդյունավետ գործունեության հետ:

Աշխատանքում հեղինակը սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման միջոցառումներ առաջարկվում են հետևյալ ուղղություններով՝

- Հումքի մշակության և դրա վերամշակման գործընթացում տնտեսավարողներին աջակցության մեխանիզմների կիրառում,
- Հումքային բազայի ստեղծման համատեքստում առաջարկվում է իրականացնել հումք աճեցնող ֆերմերիների ու գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների համար պետական աջակցության ծրագրեր,
- Մատչելի մեխանիզմներով տեխնիկայի մատակարարման ծրագրերի իրականացում,
- Հումք արտադրող տնտեսավարողների ու գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների համար նախատեսված հատուկ պետական աջակցության տարբեր բաղադրիչներ ներառող ծրագրեր,
- Մշակել և ներդնել սիգարետն ու սիգարը ազգային բրենդ դարձնելուն ուղղված հատուկ գործիքակազմ,
- Առաջադրվել է ձեռնարկատիրական ռիսկերի հաղթահարմանն ուղված միջոցառումների բաղադրիչներ:

Կազմակերպության ֆինանսական կայունության տեսանկյունից հեղինակը նպատակահարմար է համարվում, երբ պահուստային կապիտալը կազմում է սեփական կապիտալի 10 %-ից ավելին: Ներդրումային գործունեության հետ կապված պահուստային հատկացումներին արված շահաբաժինը որոշելիս, ձեռնարկատիրական ռիսկերը մեղմելու նպատակով աշխատանքում առաջարկվում է հաշվարկել նաև պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը:

Ատենախոսի կողմից կատարված էկոնոմետրիկ վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ուսումնասիրվող կազմակերպություններում (2013-2019թթ.) համախառն արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված է աշխատողների թվի ավելացմամբ:

Աշխատանքում հեղինակը կարևորում է ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում կատարվող ներդրումների տնտեսական և սոցիալական նշանակությունը: Ստեղծվում են նոր աշխատատեղեր, նվազում է գործազրկության մակարդակը, տեղի է ունենում զբաղվածության մակարդակի բարձրացում, ապահովում է տնտեսական աճ, ավելանում են բնակչության աշխատանքային և գործարարությունից ստացվող եկամուտները:

Աշխատանքի արդյունքային դրույթները ամփոփվել են եզրակացությունների մասում:

Ընդհանուր առմամբ աշխատանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետևություն անել, որ հեղինակին հաջողվել է լուծել առաջադրված խնդիրը, մասնավորապես ներկայացվել են ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպություններում:

Ատենախոսությունը շարադրված է 148 էջի շրջանակներում, ներառում է 14 աղյուսակ, 3 նկար և 10 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ կարևորվում են հետևյալները.

- Կատարված համակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտվել են Հայաստանի Հանրապետության սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները:

- Բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում սիգարի և սիգարետի արտադրության, արտահանման և ներմուծման դինամիկայի զարգացման տրենդները, ինչպես նաև ՀՀ ծխախոտի համախառն բերքի վրա ծխախոտի տարածությունների և բերքատվության մակարդակի ազդեցության աստիճանը և տրվել է դրանց տնտեսաչափական գնահատականը:
- Հայաստանի Հանրապետության սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրների և ոլորտի զարգացման ռեսուրսային ներուժի համակողմանի գնահատման ու վերլուծության հիման վրա մշակվել են ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները:

Ընդհանուր առմամբ, ատենախոսին հաջողվել է ներկայացնել ամփոփ գիտական աշխատանք: Միաժամանակ, աշխատանքի ուսումնասիրությունից բացահայտվել են մի շարք թերություններ, որոնք հիմնականում հետևյալն են.

<u>ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</u>

1. Աշխատանքի «Ձեռնարկատիրության զարգացման տեսական և մեթոդական հիմքերը» խորագիրը կրող առաջին գլխի «Ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում «Ֆիլիպ Մորրիս Ինտերնեյշնլ» ընկերության օրինակով» 1.3. բաժնի վերաբերյալ առկա է որոշակի նկատառումներ, նախ բաժնի նյութը՝ թվային, իրավիճակային և այլն հիմնականում չունի համապատասխան հղումներ: Նշվածից բացի աշխատանքի տվյալ բաժինը շահած կլիներ եթե հեղինակը կատարված վերլուծությունների արդյունքում ընդհանրացներ սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրության միջազգային փորձի առանցքային դրույթները, որոնք կարող էին աշխատանքի համար ունենալ կիրառական նշանակություն:
2. Աշխատանքի «Ձեռնարկատիրության զարգացման առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» երկրորդ գլխի «Սիգարետի և սիգարի արտադրության առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը ՀՀ-ում» 2.1. բաժնում հեղինակը հանգամանալի

ուսումնասիրվող բնագավառի տնտեսական նշանակությունն առավել ընդգծել է դիտարկվող ոլորտում հարկային մուտքերի ծավալների, ծխախոտի հումքի արտադրության միտումների վերլուծության առումով: Մեր կարծիքով, դիտարկվող բնագավառի տնտեսական նշանակության շեշտադրման համար կարևոր կլիներ նաև զբաղվածության ապահովման հնարավորությունների և միտումների առավել ընդգրկուն ներկայացումը: Աշխատանքի նույն երկրորդ գլխի «ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության վերլուծությունը» 2.2. բաժնում հեղինակը կատարված վերլուծությունների արդյունքում (աղյուսակներ 6 և 7) առաջադրում է ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների շրջանառու միջոցների շրջանառելության խնդիրը: Հարցի կարևորությունից ելնելով աշխատանքի տվյալ հատվածը շահած կլիներ եթե հեղինակը անդրադարձ աներ, առաջարկություններ ներկայացներ շրջանառելիության արագացման հնարավորությունների ուղղությամբ:

3. Աշխատանքի նույն երկրորդ գլխի «Սիգարետի և սիգարի արտադրության ներքին ու արտաքին շուկաների առանձնահատկություններն ու վերլուծությունը» 2.3. բաժնում հեղինակը եկել է այն հետևության, որ ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պետք է անընդհատ կատարելագործեն իրենց տեխնոլոգիաներն ու արտադրության կազմակերպման մեթոդները: Սակայն, աշխատանքի տվյալ բաժնում հեղինակի կողմից տեխնոլոգիաների կատարելագործման հիմնավորումներն և առաջարկությունները բացակայում են:
4. Աշխատանքի երրորդ գլխի «Ձեռնարկատիրության զարգացման պետական կարգավորման ուղիները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրութան ոլորտում» 3.1. բաժինը առավել ամբողջական և շահած կլիներ եթե տվյալ բաժնի շրջանակներում հնարավորինս տեղ հատկացվեր ծխախոտի հումք արտադրող տնտեսավարողների և վերամշակողների տնտեսական հարաբերությունների կատարելագործան, մասնավորպես պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը, որը կարևորագույն նախապայման կարող էր լինել հումքի արտադրության ոլորտի

ձեռնարկատիրության զարգացման համար: Աշխատանքի նույն երրորդ գխի «Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները ՀՀ-ում» 3.2. բաժնում հեղինակը դիտարկվող ոլորտում ներկայացրել է ռիսկերի բազմազան դրսևորումներ, որոնք պայմանավորված են արտաքին և ներքին գործոններով, սակայն ռիսկերի կառավարման կատարելագործան ուղղությունները մեր կարծիքով դիտարկված է նեղ շրջանակում, մասնավորապես ռիսկերի կառավարման նախապայման է դիտարկվել կազմակերպության պահուստային կապիտալի և սեփական կապիտալի որոշակի հարաբերակցության պահպանուը: Առաջադրվածը ընդունելի է սակայն, աշխատանքը ռիսկերի կառավարման տեսանկյունից շահած կլիներ եթե հեղինակը դիտարկեր տարատեսակ այլ ռիսկերի կառավարման մոտեցումներ:

5. Աշխատանքի եզրափակիչ գլխի «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» 3.3. բաժնում հեղինակը փաստացի վիճակագրական հարուստ նյութի հիման վրա գնահատել է ուսումնասիրվող ոլորտում ներդրումների արդյունավետության ցուցանիշները, դիտարկվել է համախառն արտադրանքի, ներդրումների ծավալի և աշխատողների թվի հարաբերակցության միտումները, կատարվել է գործոնային վերլուծություն՝ առանձին գործոնների քանակական ազդեցության գնահատման համար: Նշվածի հետ մեկտեղ աշխատանքի տվյալ բաժնում հստակ չի տարանջատվում դիտարկվող բնագավառում ներդրումային միջավայրի հիմնանդերները և դրանց լուծման մոտեցումները:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ հիշատակված թերությունները և բացթողումները էականորեն չեն անդրադառնում աշխատանքի վրա, և ատենախոսության ուսումնասիրությունից ընդհանուր եզրակացությունը հետևյալն է.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Հակոբի Պարսյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է ու հրատապ: Հեղինակը հիմնականում կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Աշխատանքում ուսումնասիրվել և ներկայացվել են Ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպություններում: Ատենախոսը հիմնավորված մեթոդական մոտեցումների կիրառմամբ կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսության արդյունքային դրույթները կարող են օգտագործվել հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից սիգարի և սիգարետի արտադրության բնագավառում ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի, պետական աջակցության քաղաքականության մշակման բնագավառում, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների և ուսումնական նպատակների համար:

Աննա Պարսյանի «Ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպություններում» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Հ.Ս. Ծպնեցյան**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Ս. Ծպնեցյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի քարտուղար, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Գ.Վ. Ավագյան**

27 մայիսի 2021թ.